Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 13-ի N 256 -Ա որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍ-ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 441-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՎ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԳՆՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿԻ

| NN ը/կ | Ձեռք բերվող ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի առավելագույն գինը (հազ. դրամ) | Տեխնիկական բնութագրերը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պոլիկար-բոնատե քարտ | հատ | 175920 | 1637 | Նախատեսված է տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի և վարորդական իրավունքի վկայականների տպագրման և քաղաքացիներին հատկաց-նելու համար, որոնք իրենցից ներկայաց-նում են անձնավորեցման պլաստիկ քարտ: Անձնավորեցման համար պատրաստ ISO ID-1 պետք է համապատասխանի ISO 7810, 10373 և DIN 2859-1 ստանդարտներին և պատրաստված լինի 100% պոլիկարբոնա-տից, ունենա հետևյալ առանձնահատկու-թյունները՝<br>- լինի բազմաշերտ լամինացվող և հնարա-վոր չլինի դելամինացիա<br>- կայուն լինի բարձր տեական ջերմաստի-ճաններին<br>- կայուն լինի ուլտրամանուշակագույն ճառագայթմանը և այլ արտաքին գործոններին:<br>Տպագրության տեսակը պետք է լինի օֆսետ՝ դիմերեսը 8, իսկ դարձերեսը 5 գույներով տպագրված:Քարտի պաշտպանիչ հատկանիշները պետք է պարունակեն՝<br>- գիլյոշով պաշտպանված ֆոն<br>- ծիածանային տպագրություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | (IRIS)<br>- պոզիտիվ և նեգատիվ մանրատառ<br>- ուլտրամանուշակագույն տպագրություն:<br>Անձնավորեցման դաշտի տվյալները պետք է տպագրվեն անմիջապես քարտի մակերեսին (Due diffusion thermal transfer) տեխնոլոգիայով: |
| 2. | Կինեգրամով պաշտպանիչ թաղանթ | գլանա-փաթեթ | 269 | 268990 | Նախատեսված է տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի և վարորդական իրավունքի վկայականների անձնավորեցման համար: Կինեգրամով պաշտպանիչ թաղանթը (TKO) բարակ, թափանցիկ (<10սմ) թաղանթ է, որով լամինացվում է պոլիկարբոնատե քարտի դիմերեսը, անձնավորեցումից հետո և պաշտպանում տվյալների կեղծումից: Քարտի վրայից հանելու դեպքում վնասվում է: Կինեգրամով պաշտպանիչ թաղանթն ունի հետևյալ պաշտպանիչ հատկանիշները՝<br>- հորիզոնական և ուղղահայց գծային շարժումներ<br>- դետալներ, որոնք կփոխեն իրենց դիրքը կամ չափերը քարտը հորիզոնական կամ ուղղահայաց առանցքներով թեկելիս<br>- փայլուն, խամրած և գունավոր դինամիկ դետալներ<br>- դետալներ, որոնք քարտի անկյունը թեկելիս, թռիչքային փևով կփոխեն կոնտրաստը<br>- 300 սմ չափի մանրատառ, որը դինամիկ կտեղափոխվի քարտը թեկելիս<br>- գունավոր մանրատառ (նանոտեքստ) 75 սմ և 15 սմ<br>- գաղտնի նկար, որը կարտաբերվի հատուկ սարքի միջոցով<br>- գաղտնի տեքստային ինֆորմացիա: |
| 3. | Թափանցիկ պաշտպանիչ թաղանթ | գլանա-փաթեթ | 450 | 86830 | Նախատեսված է տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի և վարորդական իրավունքի վկայականների անձնավորեցման համար: Թափանցիկ պաշտպանիչ թաղանթը (Overlay Datacard Clear Topcoat) լամինացվում է քարտի ինչպես դիմերեսին, այնպես էլ դարձերեսին, ինչը պաշտպանում է անձնավորեցման տվյալները և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կինեգրամով պաշտպանիչ թաղանթը: պատրաստվում է պոլիէսթերից: |
| 4. | Ներկող գունավոր ժապավեն | տուփ | 352 | 92000 | Նախատեսված է վարորդական իրա-վունքի վկայականների անձնավորեցման համար: Վարորդական իրավունքի վկայա-կանների անձնավորեցման համար անհրաժեշտ բարձր կետայնության YMCK-K RIBBON KIT անհրաժեշտ է Datacard SP75PLUS տպիչով երկկողմանի սարքի միջոցով ID-1 քարտերի երկկողմանի տպագրություն, չափման միավորը՝ տուփ, որը պարունակում է՝<br>- մաքրող քարտ՝ 86մմx54մմ (երկարությունxլայնություն), մաքրումը կատարվում է ժապավենը փոխելուց<br>- մաքրող գլանակ՝ 63.5մմx25.4մմ (երկարությունxարտաքին տրամագիծ) մաքրումը կատարվում է ժապավենը փոխելուց |
| 5. | Ներկող գունավոր ժապավեն | տուփ | 170 | 61440 | Նախատեսված է տրանսպորտային միջոցների հաշվառման անձնավորեցման համար: Տեխնիկական հատկանիշ՝<br>- MONOCROM RIBBON KIT երկկողմանի տպագրությամբ:<br>Չափման միավորը՝ տուփ, որը պարունակում է՝<br>- մաքրող քարտ 86մմx54մմ (երկարությունxլայնություն)<br>- մաքրող գլանակ չափսերը՝ 63.5մմx25.4մմ (երկարությունxարտաքին տրամագիծ): Մեկ տուփը նախատեսված է նվազագույնը 1500 պատկերի համար: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ